Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մայիսի 20-ի N 248 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ «ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է, ի կատարումն ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 03.10.2014 թ. N Մ-1005-Ա որոշման, «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին՝ որպես սեփականություն հանձնել «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «ՖաբԼաբ արհեստանոց-լաբորատորիա» ծրագրի կատարման ընթացքում կատարված շինմոնտաժային աշխատանքների արժեքը, ձեռք բերված գույքն ու նյութերը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է:
3.	Բարեգործը	«Այբ» կրթական հիմնադրամին նվիրաբերված միջոցների հաշվին (աջակիցների ցանկը ներկայացված է «Այբ» կրթական հիմնադրամի կայք էջի «Մեր աջակիցները» բաժնում https://foundation.ayb.am/hy/supporters):
4.	Ծրագիրը կատարողը	«Այբ» կրթական հիմնադրամը (ՀՎՀՀ 01558429, հասցեն՝ ք. Երևան 0009, Կորյունի 19ա):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում տեղակայված «ՖաբԼաբ արհեստանոց-լաբորատորիա»-ն է, կրթություն:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 53,507,681.67 (հիսուներեք միլիոն հինգ հարյուր յոթ հազար վեց հարյուր ութսունմեկ) դրամ և 67 լումա:

7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացողը Երևանում տեղակայված ոչ պետական «Այբ կրթական հանգույց» հիմնադրամն է: Այն հանդիսանում է Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեով գտնվող հողամասի և շինությունների սեփականատերը, ինչպես նաև լինելով ՀՀ ԿԳ նախարարության կողմից որպես դպրոց լիցենզավորված կազմակերպություն և բուն հանրակրթական գործունեություն իրականացնող, հանդիսանում է շարժական գույքի մասով բարեգործություն ստացողը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	20/03/2019 թ.-ից մինչև 20/07/2019 թ:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրը նախատեսում է «Այբ» կրթական հիմնադրամի և «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի միջև 2019 թ. փետրվարի 14-ին կնքված նվիրաբերության պայմանագրի համաձայն՝ «Այբ» կրթական հիմնադրամի բարերարների միջոցներով իրականացված շինմոնտաժային աշխատանքների արժեքի և ձեռք բերված գույքի ու նյութերի փոխանցում «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին՝ որպես սեփականություն: Միջոցառումների ծախսերը կկազմեն 53,507,681.67 (հիսուներեք միլիոն հինգ հարյուր յոթ հազար վեց հարյուր ութսունմեկ) դրամ և 67 լումա, որից՝ 1. 5,661,981.22 (հինգ միլիոն վեց հարյուր վաթսունմեկ հազար ինը հարյուր ութսունմեկ) դրամի և 22 լումայի մասով նախկինում հարկային արտոնություն չի ստացվել: 2. 47,845,700.45 (քառասունյոթ միլիոն ութ հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր) դրամ և 45 լումայի մասով նախկինում հարկային արտոնություն ստացվել է:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի իրականացումը ենթադրում է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված գույքի հանձնում «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին՝ որպես սեփականություն: Գույքի ընդհանուր արժեքը կազմում է 53,507,681.67 (հիսուներեք միլիոն հինգ հարյուր յոթ հազար վեց հարյուր ութսունմեկ) դրամ և 67 լումա, որից՝ 1. 5,661,981,22 (հինգ միլիոն վեց հարյուր վաթսունմեկ հազար ինը հարյուր ութսունմեկ) դրամի և 22 լումայի մասով նախկինում հարկային արտոնություն չի ստացվել: 2. 47,845,700.45 (քառասունյոթ միլիոն ութ հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր) դրամի և 45 լումայի մասով նախկինում հարկային արտոնություն ստացվել է:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Այբ»-ը կրթական հիմնադրամ է և իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից: Ծրագրի ավարտից հետո Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ